

Բ. Թաղումն

Եթէ էր երբէք ազնուախոհ սրտից Հայոց՝ մորմոքել դառնապէս ընդ զրկումն յամենաշնորհ ազգապետէ, կարծեմ ոչ առաւել քան զայս էր գտեալ. ոչ մեծագոյն քան զայս կորուստ, եթէ արժան իցէ կորուստ նշմարել՝ իմա՝ որ մեծ գտեալ՝ իլեանսն, անմահ եթող վաստակ եւ համբաւ. որ՝ եթէ եւ մեզ յետնոցս իբր եօթամբք դարուք՝ այսքան սխրալի, ո՛րքան արդեօք ականատեսիցն, հիացողացն, վայելողացն՝ իպերճութեանն, ի քաջութեանն, իմաստութեանն, իտուրս եւ իշնորհս նորին: Առ հասարակ միաբան գովութիւն եւ սքանչանք ամենայն պատմչաց, եւ ոչ ումեք ստգտանք, քաջ իսկ յայտ առնեն՝ զանհնարին սուգ եւ տրտմութիւն հպատակացն, զմեծաց եւ զփոքունց՝ իմահուան նորա. զոր հակիրճ բանիւ աւանդէ ոմն՝ իպատմչաց, եթէ, «յոյժ սգացին զնա ամենայն աշխարհն իւր, եւ զսարսուռ իմն զանխուլ ընթացեալ ընդ ոսկերս օտարաց անգամ, մանաւանդ մերձաւորացն Խաչակրաց, որոց այնքան օգտեալ եւ առաւել եւս ակնկալութիւն էր՝ իմանէ»²³⁴:

Չիք երկբայել՝ զի երախտեալքն եւ յարգողք եւ պանծացողք յայնպիսի տէր եւ թագաւոր, զարժանաւորն նմա կատարեցին սգախառն մեծահանդէս յուղարկաւորութիւն հանգստեան, որպէս երբեմն հարք նոցա՝ մեծին Տրդատայ, կամ հնագոյնքն եւս՝ Արտաշիսի ԲԻ: Եթէ արդեօք եւ որ յետ Աստուծոյ՝ զիտակն էր գաղտնեաց սրտի նորին եւ աւագագոյն աչօք ճանաչող արժանեացն, դրուատիչ Սիրելւոյն Ներսիսի, նոյն ինքն Սկեռացի հռետորն Գրիգոր, արտասանեա՜ց եւ իվերայ Լեւոնի՝ բան գերեզմանական, համառօտելով զվարս նորին, զաջողութիւնն եւ զքաջութիւնս, զազգի միոյ անյոյս թագաւորութեան յարուցիչ եւ զարդարիչ, զպատուեալն՝ իկայսերականաց եւ իՀռովմայ գահուց, զմտերիմն եւ զբանակից հեռաւոր եւ մերձաւոր աշխարհատեարց, զձգողն՝ լծագաց արեւմտից եւ արեւելից յարքունիս եւ իշահաստանս Կիլիկիոյ՝ զկարաւանս եւ զտորմիդս նաւուց նոցին, եւ իշահէ եւ իբաժէ աղխամաղիսի հարստացուցիչ

²³⁴ Յովսէփ ի ժամանակագրաց արեւմտեայց եւ պատմչաց Խաչակրաց նշանակեն զնահ Լեւոնի. որպէս Բելլովագեանն. «Ejusdem (Damiati) obsidionis tempore Rex Armeniae Leuo defunctus est in terra sua».- Տ'էսրէ (Pierre d'Esrei): Nouvelles vindrent au roy Jehan de Hierusalem, que le roy d'Armenye, le quel retourna en Acre, estoit all

é de vie a trespas

Տարեգիրք Սրբոյ Երկրին (Annales de Terre Sancte): «En cel an morut li rois Lyvon del Meane ? Ուղղագոյն եւս ա յլ գրիչ. «En cheli an morut le roy Livon d'Ermenie».